Արձանագրություն N 2-3
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/2 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի գ. Կոռնիձորի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 07.03.2024թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Շատվերյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Աշ. Գրիգորյան
Ա. Բալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների և դրանց շտկման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 05.03.2024թ. ծանուցվել է գնման ընթացակարգի մասնակից <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ին՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Դ. Շատվերյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետի պահանաջները և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Տեխնիկական առաջադրանք (ՏԱ)	Գնային առաջարկ (ԳԱ)	Մասնակցի հայտի ընդհանուր գնահատականը
1	<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ	55.44	30	85.44

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Շատվերյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Դ. Շատվերյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Դ. Շատվերյան

Անդամ՝ ---------- Հ. Գինովյան

---------- Տ. Կոմիտասյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Ա. Բալայան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան